ԲԱՆԱՍՏԵՂԾ Վ. ՄԻՐԱՔԵԱՆ

(Նրա մահուան 10-ամեակի առիթով)

Ուղիղ տասը տարի է անցել այն օրից, երբ Երեւանում, 76 տարեկան հասակում, վախճանուեց հայ բանաստեղծական դրականութեան պայծառ դէմքերից մէկը: Դա Վահան Միրաքեանն է, որ հայ մշակոյթին աւանդ թողեց բարձր արուեստով կերտուած մի հիասքանչ պոէմ, որով նա շուտով մեծ ժողովրդականութիւն ստացաւ: Դա «Լալւարի որս»-ն է, որ իր բովանդակութեամբ գրական եւ հասարակական մեծ արժէք է ներկայացնում:

Ի՞նչ պատկեր է ներկայացնում, սակայն, բանաստեղծի կեանքի եւ գրական ստեղծագործութեան պատմութիւնը:

Նրա կեանքի էջերը տանում են ձեզ Շուլաւէր (այժմ Շահումեան), ուր ծնուել է նա 1866 թուականին: Գիւղի դպրոցումն էլ նա ստանում է սկզբնական կրթութիւնը: Այնուհետեւ նրան տեսնում ենք Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում, յետոյ՝ ուսուցչական ինստիտուտում, ուր էլ աւելի խորանում է ուսման մէջ եւ մասնագիտանում:

Քառասուն երկար տարիներ, իբրեւ ուսուցիչ, պաշտօնավարում է նա Անդրկովկասի զանազան քաղաքներում, գիւղերում, առանձնապէս Շուլաւէրում եւ նոր սերնդի սրտերում զարթեցնում մայրենի լեզուի եւ գրականութեան սէրը: Որպէս մանկավարժ, նա միշտ իր կոչման եւ պարտականութեան բարձրութեան վրայ կանգնած, միաժամանակ նուիրումով եւ դաղափարականով համակուած, կերտում է իր աշակերտ-աշակերտուհիների միտքը, ազնուացնում նրանց հոգիները եւ նրանց առաջնորդում առաքինութեան, ազնուութեան, աշխատասիրութեան, անձնուիրութեան եւ մարդասիրութեան լուսաւոր ուղիներով: Մեծ է նրա դերը մանաւանդ Շուլաւէրի մատաղ սերնդի ուսման եւ կրթութեան գործում: 1925 – 1929 թուականներին, իմ տեսչութեան շրջանում, նա պաշտօնավարեց Երեւանի պետական բանուորական բարձր տիպի դպրոցում: Նա իսկական դասուիարակ – ուսուցիչ էր: Իր համեստ բնաւորութեամբ, ընկերական մօտեցումով եւ մանկավարժական պատրաստութեամբ նա շուտով դրաւեց աշակերտ-աշակերտուհիների սէրն ու համակրանքը: Նա առանձին հոգ էր տանում նրանց բառապաշարը հարստացնելու, նրանց քերականական եւ ուղղագրական դիտելիքները խորացնելու եւ դրաւոր ու բանաւոր խօսքի ունակութիւնները զարգացնելու մասին: Ընդգծել էր պատուիս նաեւ նիւթերի ո՛չ միայն առարկայական մասերն ու դեղարուեստական-հասարակական արժէքները, այլեւ կերպաւորների հոգեկան աշխարհի հիմնական գծերը եւ նրանց բնաւորութեան էական յատկանիշները: Նոյնպէս աշխատում էր, որ նրանց ընթերցանութիւնն արտայայտիչ լինի, իսկ իրենց մտքերը տրամաբանօրէն եւ յաջորդականութեամբ կարողանան արտայայտել: Մի հանդամանք պարզ է, որ նրա անունից անբաժան պիտի մնան կարող, հմուտ, բարեխիղճ եւ անվերապահ օրէն նուիրուած մի ազնիւ մանկավարժի մակդիրները:



Բանաստեղծ Վ. Միրաքեանը Լալւարի սարի լանջին «Լալւարի որսը» պոէմը գրելիս, 1898 թուականին: (Անտիպ)

Սակայն, Միրաքեանը ո՛չ միայն լաւագոյն մանկավարժ էր, այլեւ օժտուած էր բանաստեղծական հարուստ ձիրքով: Գրականութեան հարուստ դարակ է դալիս նա 14 տարեկան հրապարակ է դալիս նա 14 տարեկան հասակում՝ 80-ական թուականների վերջերին: Այդ շրջանում նա գրում է գեղեցիկ խաւորապէս լիրիկական ոտանաւորներ՝ «Երկու Երգ», «Երեք վարդ», «Գեղջուկի հրաժեշտը», «Դու ասում ես», որոնք Միր Կօնօ ստորագրութեամբ լոյս են տեսնում Տիգրան Նազարեանի «Աղբիւր» մանկական ամսագրում. երգեր, որոնք իրենց զգացմունքնարական երանգաւորումով, զգացմունքի անկեղծութեամբ եւ պատկերաւոր գծագրութեամբ ընդգծում են Միրաքեանի բանաստեղծական պայծառ կերպարը: Տասը տարի անց՝ 1897 թուականին, նա հրատարակում է իր բանաստեղծութիւնների առաջին գրքոյկը՝ «Առանց լարերի» խորագրով, որի էջերը զարդարում են նաեւ «Լալւարի որս»-ը պոէմից մի փոքրիկ հատուած:

Այնուհետեւ, 1901 թուականին, «Մուրճ» ամսագրում, լոյս է տեսնում նրա գրականութեան գլուխ-գործոցը – «Լալւարի որս»ը, որ իր գեղարուեստական կառուցուածքով, բնութեան գեղեցիկ ու չքեղ նկարներով, զգացմունքների ջերմութեամբ եւ անկեղծութեամբ եւ կերպարների հարուստ գծագրութեամբ հայ բանաստեղծական գրականութեան պատմութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում: Այնտեղ Միրաքեանը ո՛չ միայն տաղանդաւոր բանաստեղծ է, այլեւ հմուտ նկարիչ: Նա վարպետ վրձինով նկարել է հայ նահապետական լեռնային գիւղի հին բարքերն ու սովորութիւնները: Այնտեղ ձեր աչքերի առջեւ ցոլանում է նաեւ գեղեցիկ Լոռին՝ իր հիասքանչ բնութեան չքնաղ տեսարաններով: Բանաստեղծն իր բոլոր ներկերը վերցրել է չքեղ բնութիւնից: Առհասարակ, բնութիւնը, նահապետական ժողովրդի կենցաղը, բարքերը, անցքերն ու դէպքերը գեղեցիկ երանգաւորումներով եւ կենդանի գոյներով իրար են ներդաշնակում, իսկ քնարերգական եւ նոյնիսկ դիւցազներգական եւ տեղ-տեղ բոմանտիկական գծագրութիւնները կազմում են պոէմայի հիմնական յատկանիշները:

«Լալւարի որս»-ի մի այլ գեղեցիկ առանձնայատկութիւնն արուեստի էութիւնն է: Գրուած է ժողովրդական ստեղծագործութեան պարզ, գրաւիչ, սահուն լեզուով եւ վառ պատկերներով: Ընդգծենք նաեւ նկարագրական գեղեցիկ էջերը, որոնց շարքում ուրոյն տեղ են գրաւում սար բարձրացող քոչւորների պատկերաւորութեան մէջ իշխող արեւելեան ճոխ գոյներն ու վարթամ երանգաւորումները, որոնց առանձին գրաւչութիւն են տալիս գիւղական կենդանի եւ խօսուն կերպարները, որոնք գծուած են այնքան վարպետ վրձինով, որ դուք կարողանում էք թափանցել նրանց հոգիները, կարդալ նրանց յոյզերն ու ապրումները, տեսնել նրանց յստակ ու

© National Library of Armenia

ջինջ, միաժամանակ ծանօթանում էք նրանց աշխարհահայեացքի էութեան եւ ձգտումների հետ: Պայծառ են, լուսաւորուած եւ կենդանի Ալվարդը, հերոս Կարօն եւ յատկապէս Աւագ Որսկանի կերպարը: Նա բնութեան հարազատ զաւակն է. մեծացել է սարերում, մթին կիրճերում, որսորդական կեանքի մէջ: Հաւատարիմ է նահապետական սովորութիւններին եւ կենցաղին: Հաստատակամութեան եւ անհերոդամտութեան տակ նա թաղցնում է ազնուութեան եւ առաքինութեան ոգին, որոնց նա երբեք չի դաւաճանում: Նա «պատժում է չարին», օգնում է անճարներին, խեղճերին: Միրաքեանը ցուցահանել է նրա վիշտը եւ ամբողջ կերպարանքը: Զգում էք, որ նա իր դարի զաւակն է, իր միջավայրի ծնունդը, նահապետական գիւղի արդիւնքը: Նա առաքինի է, մաքուր եւ բարոյական:

Սրտառուչ է նաեւ դեղեցիկ եւ նազելի Ալվարդի կեանքը: Միրաքեանը կարողացել է իր զգացմունքներով մաքուր, պարզ եւ խորունկ գիւղական աղջկայ մէջ թաղնուած դեղեցիկ գծերը լուսաւորել եւ պատկերել: Նրա երազները, վիրաւոր հիացմունքները եւ վշտերը յուզում են ձեր հոգեկան աշխարհը:

Ահա եւ ձիագող Կարօն, որից սարսափում են ամէնքը: Վառ եւ պայծառ գոյներով է վրձինուած նաեւ աշուղը: Նոյնքան կենդանի են եւ խօսուն սարսորները, բէգը, ծառաները եւ այլ դէմքերը: Միրաքեանը բանաստեղծական ցայտուն երանգներով նկարագրել է պօէմի հերոսների գործերն ու կենցաղը, որոնք նկարչական մի-մի գեղեցիկ պատկերներ են:

Պօէմին առանձին գրաւչութիւն են տալիս նաեւ սարսորների մրցութիւնը, կռիւը, բէգի յարձակումը սարսորների վրայ, գոմշամարտը, Աւագի հիւրասիրութիւնը վիրաւոր Կարոյին, որոնք լեռնային կեանքը պատկերող բանաստեղծական գրականութեան հիասքանչ էջեր են, որոնց մէջ ցոլանում է Միրաքեանի պօէզիայի վեհութիւնն ու խորութիւնը:

«Լալւարի որս»-ի բնորոշ եւ ուրոյն յատկանիշը գաղափարական դիծն է: Դա գիւղական միջավայրի աշխարհահայեացքն է: Միրաքեանն իր ստեղծագործութեամբ պայքար է ծաւալել հին, նահապետական կենցաղի, հնագոյն սովորութիւնների, հնաւանդ ադաթների դէմ, որոնք կաշկանդում են անհատական ազատութիւնն ու սէրը: Բողոքել է նաեւ բէկերի, աղալարների ճնշումների դէմ եւ գծել է երկու հարեւան ցեղերի (հայ եւ թուրքի) հակադրութիւնից բղխող ազգայնականութիւնը: Նոյնպէս արտայայտել է աշխատաւորութեան ձկտումները եւ իր անկեղծ սէրն ու համակրանքը թշուառ աշխատաւոր դասի նկատմամբ, որոնք անցեալում ճնշուել են բռնակալական մռայլ կարգերում:

* * *

Այժմ լուսաբանենք մի էական հանգամանք: Հայ գրականութիւնը սիրողների մի սեղմ շրջանում իշխում է մի սխալ տեսակէտ, որ իբր թէ Վահան Միրաքեանն իր պօէմը գրելիս օգտուել է բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի «Անուշ»-ից: Դա արդիւնք է բացարձակ թիւրիմացութեան: Պատմական ճշմարտութիւնն այն է, որ Միրաքեանը «Լալւարի որս»ը գրել է Թումանեանի հանրածանօթ «Անուշ» պօէմից երեք տարի առաջ եւ լոյս է տեսել 1901 թուին «Մուրճ» ամսագրում, իսկ Թումանեանի յայտնի «Անուշ»-ը տպագրուել է 1903 թուականին: Կայ էականը: Դեռ 1898 թուին Թումանեանը Շուշւէրում «Լալւարի որս»-ի ձեռագիրը Միրաքեանից ստանում է կարդալու նպատակով եւ ամբողջ վեց ամիս իր մօտ պահում, իսկ վերադարձնելիս, պօէմի խոր տպաւորութեան տակ, ձեռագրի վրան գրում է հետեւեալ գնահատական տողերը.

« Սիրեցի, կօնօ՛, քո անուշ երգը,
Թող Աստուած օրհնի Գուգարքի բերքը»:

Թումանեանի մակագրութեամբ «Լալւարի որս»ի ձեռագիր փոփոխակը, որ ներկայումս գտնւում է Երեւանի պետական Թանգարանի պատմա-գրական բաժնում, վկայում է, որ Միրաքեանի պօէմը Թումանեանը սիրել է եւ այդ բանաստեղծութեամբ տպաւորուել է: Այս փաստական տուեալներն էլ պարզ ընդգծում են, որ Վ. Միրաքեանն երբեք չի ազդուել Յովհաննէս Թումանեանի «Անուշ»ից եւ միանգամայն անարդար է ու սխալ Վալերի Բրիւսովի այն տեսակէտը, երբ նա Միրաքեանին համարում է Յ. Թումանեանի աշակերտը:

Կայ մի այլ ճշմարտութիւն: Միրաքեանն իր պօէման յօրինելիս եւ բովանդակութիւնը կառուցելիս դիմել է ժողովրդական բանահիւսութեան անսպառ գանձարանին, որի նրբութիւններից նա կարողացել է ա՛յնքան հմտութեամբ օգտուել: Կարդացէ՛ք «Լալւարի որս»-ի քնարական էջերը եւ այնտեղ պիտի տեսնէք ժողովրդական ստեղծագործական արուեստի վերջին ոգին, կառուցման ձեւը, պատկերաւորութիւնը եւ երաժշտական երանգաւորումները: Պօէմում իշխում են նաեւ ժողովրդական վէպի գեղարուեստական կառուցման որոշ գծերը: Ուրոյն տեղ են գրաւում նաեւ ժողովրդական ասացուածքները, անէծքները, օրհնութիւնները եւ առածները, որոնցով շատ հարուստ է «Լալւարի որս»ը, որոնք առանձին գրաւչութիւն են տալիս պօէմի ինքնուրոյնութեանը:

Կայ մի այլ հիմնական աղբիւր, որից խորապէս ներշնչուել է Վահան Միրաքեանը: Դա Ղազարոս Աղայեանի «Տորք Անդեղ»ն է: Միրաքեանի Աւագ Որսկանը եւ Աղայեանի Տորքն օժտուած են բնաւորութեան նոյն գծերով եւ նոյն յատկանիշներով, իսկ իրենց կենցաղով եւ մտայնութեամբ երկուսն էլ գերազանցօրէն նահապետական են:

Չնայած ընդգծուած ազդեցութեան, Միրաքեանի պօէմը միանգամայն ինքնուրոյն ստեղծագործութիւն է, նկարուած բարձր արուեստով եւ բանաստեղծական հմուտ վրձինով, ուր իշխում է նիւթի եւ ձեւի լիակատար ներդաշնակութիւնը: Եւ դա պօէմի լաւագոյն նուաճումն է:

Բանաստեղծութեան ինքնուրոյնութիւնը թերեւս պիտի բացատրել նրանով, որ Միրաքեանն իր նիւթը վերցրել է այն միջավայրից, որին նա խորապէս ծանօթ է եւ իրազեկ, նկարագրել է այն աշխարհը, ուր անցել են նրա մանկութեան եւ պատանեկութեան տարիները: Նա քոչւորների հետ բարձրացել է Լալւար սարը, ապրել սարսորների շրջանում, նրանց հետ մասնակցել է խմբական որսի տեսարանին, մօտիկից ուսումնասիրել է ժողովրդի հին սովորութիւնների ու կենցաղի ցայտուն էջերը: Դա «չախմախի հրացանի» եւ ֆիզիկական ոյժի ժամանակաշրջանն է, ուր գիրքը էական դեր չի կատարում, այլ՝ բնատուրքը, ուր տուած խօսքը, խոստումը շատ աւելի արժէք ունին, ուր իշխում է սրտաբաց հիւրասիրութիւնը եւ մարդու կեանքը կախում ունի բնութիւնից, ուր կնոջ ընկերային դրութիւնը ծանր է ու դժոխային եւ ուր հասարակութիւնը կաշկանդուած է իր իսկ ստեղծած սովորութիւնների, կենցաղի կանոնների բռնութեան եւ կոպիտ ոյժի տիրապետութեան մէջ:

Թերեւս այդ երեւոյթներով էլ պիտի բացատրել, որ բանաստեղծին յուզել են նահապետական հին կարգերի, հնաւանդ աւանդութիւնների, սնոտիապաշտութիւնների եւ յետամնաց տնտեսութեան բնորոշ գծերը: Յուզել են հին կեանքի շերտաւորումն ու հերոսների հասարակական կա-

© National Library of Armenia

ցութիւնը: Եւ նա անցեալի կեանքը, իր ստեղծագործական երեւակայութեան շընորհիւ, կարողացել է վարպետօրէն եւ հարազատութեամբ պատկերել: Բանաստեղծը խորապէս տպաւորուել է Գուդարք աշխարհի բնութեան գեղեցկութիւններով եւ իր հարուստ տպաւորութիւնների շտեմարանից կերտել է գեղարուեստական պօէմը, որ «Անուշ» պօէմ ի հետ, կազմում է բանաստեղծական գրականութեան հիասքանչ ծաղկեփունջը, պօէմներ, որոնք տարիներ շարունակ զարդարել են հայ դպրոցական դասագրքերի էջերը եւ որոնցով կրթուել են ամբողջ սերունդներ:

* * *

Միրաքեանի «Լալւարի որս»ի արուեստի խորութեան մասին աւելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ առաջ բերենք հայ տաղանդաւոր գրողների եւ գրաքննադատների հեղինակաւոր կարծիքները, որոնք տարբեր բնորոշումներով արձանագրել են նրա պօէմի գեղեցկութեան էութիւնը:

Դերենիկ Դեմիրճեանի կարծիքը

«Լալւարի որսը» միակն է իր տեսակի մէջ, որ գրուած է տաղանդաւոր գրչով: Լեռնային նահապետական, ասպետական կենցաղը դարձել է նրա մէջ իր շատ արժանաւոր պատկերողին: Անցած կեանքի այդ էտապը «գրանցուած է» մեր պօէզիայի մէջ բանաստեղծական բարձրութեամբ, եւ դա Վ. Միրաքեանի մեծ ծառայութիւնն է մեր գրականութեան պատմութեան մէջ... Ինչ գրեց Վ. Միրաքեանը, համարեա մի պօէմով յայտնի դառաւ, բայց ուրեմ մի բազմարուվանդակ, շքեղ պատկեր, որ բաւական է նրա անուան համար անմոռանալի մնալու մեր գրականութեան պատմութեան մէջ: Նա այս պօէմով դառաւ մեր գրականութեան Դողոխեանը: Կան այդպիսի անուններ նաեւ այլ գրականութիւնների մէջ. ինչպէս Գրիբայեդովը: Դա թերութիւն չէ, այլ իւրայատկութիւն:

Աւ. Իսահակեանի, Ստ. Զօրեանի, Կ. Զարեանի, Գ. Աբովի, Ա. Վըշտունու եւ այլ գրողների կարծիքը

... Վահան Միրաքեանը պատկանում էր այն սակաւաթիւ գրողների շարքին, որոնց գրիչը ժլատ է ստեղծագործական իր գեղծումների մէջ, սակայն որոնք մի գրական բարձրարժէք երկով արտայայտում են բոլոր այն յոյզերն ու մտքերը, որոնք ալեկոծում են բանաստեղծի սիրտը: Այդպիսի գործերից է Միրաքեանի «Լալւարի որս» պօէմը, որ կերտուած է բանաստեղծական բարձր շնչով եւ իր պատուաւոր տեղն է գրաւում հայ գրականութեան պատմութեան մէջ... Միրաքեանի հիմնական ստեղծագործութիւնը, իր բանաստեղծական շնչով ու շօշափած սոցիալական խնդիրներով, մեծ արժէք է ներկայացնում նաեւ այսօր:

Սուրխաթեանի բնորոշումը

Վ. Միրաքեանը յայտնի է դարձել իր «Լալւարի որսը» միակ պօէմով: Լոռայ լեռնականի հովւական, պարզ, նախնական կեանքն է նրա ստեղծագործութեան առարկան: Պօէմի առանցքը մի ողբերգական սիրոյ պատմութիւնն է: Հովւական կեանքի պատկերներ ու բնութեան գունեղ տեսարաններ գծելու մէջ նա ցուցադրել է մեծ շնորհք: Պատմում է դիւցազներգական սառնասրտութեամբ. լեզուն հարուստ է, պատկերները ճոխ:

* * *

Միրաքեանի վերջին շրջանի երկերում ցոլանում է վերածնուող հայրենիքի կեանքից որոշ նկարներ: Դրանցից ուշագրաւ են «Կովկասիաղա», մանաւանդ «Եղնիկի փէրի» պօէմը, որ տոգորուած է համա-

մարդկային իդէալներով: Ունի նաեւ մի քանի պիէսներ, որոնք քանիցս բեմադրուել են Երեւանի դպրոցական հանդէսներում: Դրանցից յայտնի է «Մանուշի հարսանիքը»: Ընդգծենք, որ Միրաքեանի նոր ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ «Լալւարի որս»-ից որոշ հատուածներ մինչեւ օրս էլ անտիպ են մնում: Այդ էջերից շատերը 1946 թուին, Երեւանում, սիրով տրամադրեց մեզ տիկ. Միրաքեանը: Այդ նիւթերն էլ, բանաստեղծի մահուան 10-ամեակի առիթով, յանձնում ենք հայ գրականութեան պատմութեանը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ «ԼԱԼԻՒԱՐԻ ՈՐՍԸ» ՊՕԷՄԻՑ

Թէեւ չտւիր ինձ գէթ մի ժպիտ,
Բայց քո աչերը սիրուն երկնքի —
Որ մերթ ցայտում են լուս, տանջանք եւ վիշտ,
Թող սողուն մարդը, նենգ մահկանացուն,
Թող գոնէ նայեն իմ աշխատանքին
Եւ դու ժպտալով գէթ հարցրու նրան,
Ինչու ուիրեց մոռցած ամէնքին
Իր չնչին երգը քո չքնաղ անուան.
Անմեղ եւ մաքուր, իբրեւ լեռան ձիւն,
Ռնքուշ, նորաբաց, ինչպէս թարմ շուշան.
Թող սողուն մարդը նենգ մահկանացուն,
Զգայ, որ դու ես զարդարում նրան:
Ահա ներշնչուած քո սեւ աչերով՝
Ուզում եմ երգել Որսը Լալւարի.
Նկարում եմ քեզ բուռն տենչերով,
Որ յիշե՛ս զուցէ սէրը թշւառի:

* * *

Ո՛վ դու, նազելի՛ս, որ դեռ իշխում ես
Ցաւերժ գեղուքեան սահմանի վրայ,
Սիրոյդ հեղեղով, որ ինձ խեղդում ես,
Հոգւոյդ թռիչքով գէթ ինձ երեւայ:
Դէ՛, գեղեցիկդ հողեղէնների,
Թռիր թափանցիկ, անճիւք թեւերով.
Տո՛ւր ինձ բանալին բոլոր երգերի,
Քո սեւ կայծկլտուն թովիչ աչերով.
Թօքափիր քեզնից աշխարհն արտաքին,
Թռչելով գիրկը յաւերժ գոյութեան.
Ե՛կ, գրկիր դու ինձ հին յիշողութեան
Անուշ ու թովիչ վառ զգացումներով,
Սիրոյ, ճշմարտի եւ գեղեցկութեան
Մոռացած երգերի ելեւէջներով.
Ե՛կ, անցնենք լեռներ, հովիտ եւ անտառ,
Արեւ եւ լուսին գիշեր եւ ցերեկ:
Բոլորը թողնենք, թռչենք անդադար,
Փնտռենք ա՛յլ երկիր, երկինք, տիեզերք:
Մերթ որպէս արծիւ սիրոյ թռիչքով,
Հոյլերն աստղերի երկնուց թօքափենք:
... Ե՛կ, տուր ինձ թեւեր, որ ես թռչելով,
Վառ զգացումների նոր դռներ բանամ
Եւ երկրի երգը երկինք հնչելով,
Ցաւերժ երգերի ծովում լողանամ:
Թռիչք տո՛ւր, թռիչք հոգուս թեւերին,
Որ թռչեմ անզուսպ հեռո՛ւն ու հեռո՛ւն,
Եւ յաւերժուքեան դալար ափերին
Թողնեմ, որ հոսի երգերի առուն:

ԷՋԵՐ «ԵՂՆԻԿԻ ՓԷՐԻ» ԱՆՏԻՊ ՊՕԷՄԻՑ

Գիշեր է մթին. լեռներն ամպամած,
Վերմակի տակից գագաթներ հանած՝
Հորիզոնում լուռ սիրով անզուսան
Ննջում են փարուած վիշապի նման:

Արշալոյսի հետ դողում են աստղեր,
Մարում են մէկ-մէկ երկնքի աչքեր.
Մրափած տեսքը մռայլ լեռների,
Զուգւում է չքնաղ լուսով արեւի:

Այնտեղ մի լեռ կայ արիւն արցունքով,
Լալկան են կոչել նրան յարգանքով.
Այնտեղ մի լեռ կայ արիւն արցունքով,
Որոնք դարերի արցունքով կու լան:

Աղբիւրներ ունի այն լեռն անհամար,
Ծաղիկներ ունի ձմեռ թէ ամառ.
Թռչուններ ունի, բլբուլներ խօսուն,
Համերգներով են երգում ու խօսում:

Բայց մի աղբիւր կայ աղբիւրներից մեծ,
Լալկան սարի մի խոր ձորի մէջ.
Այնտեղ հոսում է ցաւերժ Աղբիւրը —
Անմահական է նրա պաղ ջուրը:

Այնտեղ տօնում են տօնն Ամանորի,
Կոյսեր են գալիս զօրաւոր ջրի.
Եւ ոյժ է տալիս նրանց գերբնական,
Ցաւերժ աղբիւրի ջուրն անմահական:

© National Library of Armenia